

Արձանագրություն N2
ԵԼՀ Ֆակուլտետի գիտխորհրդի

08.10.2019թ. նիստի

Օրակարգ

1. ԵՊՀ 100-ամյակի կապակցությամբ հուշադրամների, նամականիշների և պատվոգրերի արժանացած գործընկերների մեծարում:
2. Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչի՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս.Գասպարյանի տարեկան հաշվետվություն:
3. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման գործընթացի քննարկում:
4. Նոր մասնագիտությունների վերաբերյալ քննարկումներ:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 27-ը:

- Ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը շնորհավորեց գիտխորհրդի անդամներին ԵՊՀ 100-ամյա տարեդարձի կապակցությամբ և շնորհեց այդ կապակցությամբ նախատեսված հուշամեդալները, պատվոգրերը ու նամականիշները:
- Ֆակուլտետի դեկանի տեղակալ Գ.Գրիգորյանը ներկայացրեց դասախոսների դասերից բացակայելու հարցի վերաբերյալ որոշ նկատառումներ: Մասնավորապես, քննարկվեց դասի փոխարինման հարցը, որի արդյունքում որոշվեց՝ դասի փոխարինում պարագայում անգամ, դասախոսը պարտավոր է լրացնել բացթողնված դասը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչի տարեկան հաշվետվությունը: Ս. Գասպարյանը իր ելույթում նշեց, որ ամբիոնը, զրանցած հաջողությունների հետ մեկտեղ,

այնուամենայնիվ, ունի որոշակի խնդիրներ: Նա մասնավորեցրեց այն հանգամանքը, որ ամբիոնի հաստիքների թիվը 30 է, իսկ դասախոսների թիվը՝ 55: Ամբիոնում իրականացված աշխատանքներից է՝ 4 մենագրություն, 47 հոդված, որոնցից 17՝ արտերկրում, գիտաժողովներում զեկուցումներ 46, որոնցից 8՝ արտերկրում, 5 գիտական սեմինարների վարում, որոնցից 4՝ արտերկրում, Armenian Folia Anglistika գիտական հանդեսի հրատարակում տարեկան 2 անգամ: Ամբիոնը 2019 թ. կազմակերպել է գիտաժողով, որն ունեցել է շուրջ է 200 ունկնդիր, 100 զեկուցում, 29՝ արտերկրից: Անգլիական բանասիրության ամբիոնին կից ֆակուլտետում գործում է երկու գիտահետազոտական լաբորատորիա՝

ա) անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիա

բ) բրիտանական գրականության և լեզվամշակույթի ուսումնասիրության լաբորատորիա

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ի գիտություն ընդունել ամբիոնի վարիչի / Ս.Գասպարյանի/՝ 2019 2020 ուս. տարում ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը, հաստատել դրանք՝ նոր հաջողություններ մաղթելով ամբիոնին:

ԼՍԵՑԻՆ՝ Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման գործընթացի հարցը/Ա.Զուբարյան/: Ա.Զուբարյանը նշեց, որ մասնագիտական դասընթացները

ակտիվացել են: Moodle ծրագիրը մյուս տարվանից ներմուծվելու է բոլոր մակարդակներով: Անգլերենի դասընթացը պարտադիր է հիմգ տարում բարելավել մեկ մակարդակով: Հոկտեմբերի 15-ից սկսելու են Printel նորարարական մեթոդով ուսուցման ծրագիրը,որից երկուսը պարտադիր է սկսնակ դասախոսների համար: Ընդհանուր կրեդիտների քանակը 30 է, որի հիմնական մասը կարելի է հավաքել հետազոտական կառուցամասով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ներկայացված հաշվետույունը գնահատել դրական:

3. ԼՍԵՑԻՆ՝ ա) ԵԼՀ ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի «Արտասահմանյան գրականության և գրական գործի մենեջմենթ» մագիստրոսի կրթական ծրագրի առաջարկի հայտի մասին հարցը: Ա.Առաքելյանը նշեց, որ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի վերջին արմատական փոփոխությունների հետևանքով, ինչպես նաև ուսանողության շրջանում արտասահմանյան գրականության հանդեպ պահանջվող հետաքրքրության պայմաններում կարիք է առաջանում արտասահմանյան գրականության դասավանդվող ծրագրին զուգահեռ մշակել և ներկայացնել առարկայի ծրագրային նոր հայտ:

բ) ԵԼՀ ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի « Եվրոպական և ամերիկյան գրականություն» բակալավրի ծրագրի առաջարկի հայտի մասին հարցը: Ա.Առաքելյանը նշեց, որ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի վերջին արմատական փոփոխությունների հետևանքով, ինչպես նաև ուսանողության շրջանում արտասահմանյան գրականության հանդեպ պահանջվող հետաքրքրության պայմաններում կարիք է

առաջանում արտասահմանյան գրականության դասավանդվող
ծրագրին զուգահեռ մշակել և ներկայացնել առարկայի
ծրագրային նոր հայտ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հավանություն տալ նոր ծրագրերի ստեղծման
առաջարկին: Քվեարկությունը միաձայն:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Գիտխորհրդի նախագահ և դեկան,բ.գ.թ.,դոց.՝

Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար բ.գ.թ.,դոց.՝

Մ.Դավալյան

08 .10. 2019 թ.